

ղարդա հատվածի մասին, ուր ակնարկված առավելության վերա ավելանում է երբեմն և տեղին ՀՈՒՄՈՐԸ:

Վերջին երկու հատվածների մեջ հեղինակը խոսում է Պատմական թանգարանի, Մատենադարանի և Թատրոնների մասին, որոնք հետաքրքրական կլինին և հաճելի, ինչպես պատմական և հինավորց վայրերին տված այցելությունները: Զարմանալի է, որ չի խոսում թանգարանի նկարչական բաժնի մասին, որ մեր ներկա ստեղծագործության պարծանքն է:

Ենուն հարուստ է, պատկերավոր և սահման, ունի բազմաթիվ նորաստեղծ կամ ոչ շատ գործածելի բաղեր և արտահայտության ձևեր, որ առանձին գեղեցկություն են տալիս հեղինակի գրության ոճին: Մեջ ենք բերում պատահաբար մի քանի երեսից օրինակներ ավելի հասկանալի դարձնելու համար մեր նկատողությունը:

Եր. 117, ա) «Իրարձակ սկսան հնչել մենաստանին հնամյա զանգակները լեռնասույզ դողանջներով»:

25 մայիս 1947 թ.

Անթիլաս

## ԳԵՂԵՑԻԿ ԺԵՍԹ ՄԸ

«Արևա-ը գրում է. —

Մեր ընթերցազները կհիշեն Վեհափառ Դարեգին Կաթողիկոսի Հաւեպի Ս. Թ. Մանկանց եկեղեցվույն մեջ (իր հորելինական հանդիսության առթիվ) խոսած հոյակապ փակման ճառը, որ հրատարակվեցավ, մեր մարտ 28-ի թիվին մեջ: Այդ ճառին վերջաբանի մեջ Վեհափառը կհայտարարեր թե ուներ հրատարակելի երեք երկասիրություն, յուրաքանչյուրը 1000 տպագրյալ էջնոց, և կոչ կըներ, որ հայ մշակութին բարեկամ հայ անհատներ օգնեն իրեն անոնց տպագրության համար:

բ) «Այդ ժայռափոր հազարամյա ու խարեղաշղող կամարներուն տակ, ուր աղոթեր ին մեր հայրերը, համակվեցա անասելի վեհության զգացումով»:

դ) «Անոնք (ժողովուրդը) կձայնակցեին և կեղեցականներու և տիրացուներու երգեռողության, որ արձագանք կուտար Աղատ դետի հովտին և լեռներուն մեջ»:

Եր. 118. «Բայց կհավատա Աստուծո նախախնամությամբ բույր, լուս ու ժախտ մանանայի (տպված է մամոնայի) հանգույն պիտի իշեն մեր երկրի և ժողովրդի վրա: Այս խոսքերն է դրել մեր բիրանում Գեղարդում խոսած քարոզի բովանդակությունը հիշած ժամանակը Կարելի է նման միտք արտահայտել ենք, բայց ոչ այդպիսի գեղեցիկ պատկերավորությամբ:

Դերենիկ եպիսկոպոսի այս գիրքը ոչ միայն օգտակար կլինի ընթերցողներին, այլև վայելք կպատճեռե, ինչպես գեղարդեստական մի վեպ, մանավանդ, որ զարդարված է բազմաթիվ պատկերներով:

Արդ, Մոսուլի հովելոր հովիվ արժանապատիվ Տեր Մեսրոպ Քճն. Օրջանյան նամակով մը կտեղեցացնե մեղի, թե Մոսուլի թաղականության մնայուն ատենապետ տրքտ. Գր. Աստարճյան կարդալով այդ ճառը, ինքնարերաբար հանձն առած է հոգաւայր երթք հակա հատորներուն ծախսը և այդ իմաստով գրած է Վեհափառ Հայրապետին: Շնորհաւորության արժանի ժեսթ մը, որ կրնա որպես հետևելի օրինակ ծառայել ուրիշ ազգայիններու:

Արվեստագետ Ա. Ֆետվազչյան

## ԽՄ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԻՆ

Բոլոր այն հայերին, որ կարող են և պիտի ուզեն արտահայտվի այսու հայտնած որոշումին մասին, կանխավ կհայտնեմ շնորհակալություն:

Աշխատավոր՝ անցած հոկտեմբերի առաջին օրը թեակոթած հասակին 83-րդ տարին, դեռ այսքան խանդափառ եմ արվեստին սիրով, որքան և որպես որ էի 25—30 տարեկան եղած ժամանակ:

Ինչքան էլ զիռ չեմ տեսներ օրերիս վախճանը, բայց և շատ հասկանալի է, որ երկարակեցալուան մոտավորապես սովորական տևողությունը տասնյակ տարիներով գլած անցած մեկը, որպիսին ես եմ, չեմ կարող

աշքի առաջ շունենալ ստեղծողի նախասահմանած կարգադրածը, չեմ կարող մոռացության տալ կյանքի հավանականությունները և չհոգալ. ահա ինչու քանի Տաճառ Տերն չէ եկել, ևս կուզեմ որ ամբողջ կյանքով գեղարկվեստին նվիրված և գեղարկվեստի սիրուն ամեն աշխարհորեն սովորական ցանկալիքաները մոռացած և ուխտած պինուրյալնեւ մնալիք թողոնի մասին լինի, օրինական բնորոշված կարգով, մեկ հաստատ վերջնական կարգադրություն ըստ իմ սրտի փափսին:

Մաքում ունենալով իմ անմահ ուսուցչիս՝ հանձարիդ վարպետ Սեզար Մաքքարիի թելադրածը, որով նա կանձնարարիր ինձ՝ «Եվրոպա վերադառնալիս քերել իրենց մեր երեխ այն, ինչ որ մերն եր և արեմայաց վեր չեն գիտցեն», ևս վճռեցի (1900-ի ամառը) և գնացի Հայաստան, հազարդազար տարիներով հին, մեր նախնիքների երկիրը:

Լեզվով չի պատմվիր այն փրկումը, որ իմ մեջ տեղի ունեցավ, երբ ևս իմ աշոք տեսա այն, որև մասին տեղյակ էի թիւ ու միշտ միայն հատ ու կենտ աղքատիկ, լուր տեղագրություններից, որ մեկ-մեկ զարդարված կլինեին պատահական ելլորպացի ճամբորդների լոյս ընծայած մի գրից քաղածութափերներով:

Գեղարկվեստների դասական, պատմական, միջնադարյան և վերածնունդի դարերի և մեր ժամանակաշրջանի երկիրներում կըրթված, ապրած և գործած, դեռ ՅԵ տարեկան երիտասարդ հայ-ի արժանապատվությունը, ինքնահարգությունը, ձայն տվավ իմ մեջ, հշեցի վարպետ ուսուցչիս հանձնարարությունը և ևս միանդամայն վճռապես որոշեցի ինձ կայել կերպով վեր հանել հայությունը մոռացածների, երա արծենն ու արծանիքը շգիտցողների համար փաստերի հզորագույնը, անհակածառելին, նրա ազգային հանձարի գերիվերությունը պերճարանող շինարարական գեղարկվեստի դիմապատկերը՝ դեռ բավականի մի կանգուն հուշարձանների քարերին սրտագրավ գույներով, ինչպես և նրանց շքազարդ դրվագների անդամական կամացական պատմությունները:

Իմ հարազատ հայերը բող գիտնան, որ այս ամենը ոչ ինձենց առաջ, ոչ ինձ օրեկից մեկ ուրիշը չէ արած և իմ արածն ամբողջովին փրկված իմ ձեռքնամսն են: Այս աշխատամիտության մեջ ամենից շատը, գերիվերյան և անդիմարդիկի սրտագրավը երեսուն մեծ և մեծագույն ծավալով շրանեցի շատերը:

Ապալկերներն են Անծ մայրաքաղաքի մեջ՝ մոտավոր հարեան երկրամասերում 1900-1920 տարիները դեռ մեծապես կանգուն վիճակի մեջ տեսած հարազարական ամենաօրինական հուշարձանները: Ապա Հայաստանի շատ մի այլ տեղերը սրանց հավասարացմբ հայ շինարարական գեղարկվեստի բազում այլ կառուցվածքների բոլոր նյուղերը ներկայացնող տիպ ու տեսակների դիմացին առինքնուր բնորոշ բանակազոր շազարդի հազար հինգ հայուուր մորիքներ մատիտով պատկերացրած՝ այնպես հանկուցի մի ռենվ. «Կորոն հավասարել չի կարող սմեհանիազող լուսանկարը», ինչպես ասցին լուսունում անգիտացի դատավորություր 1921-ին: Այս ամենի հետ միենույն արկդի մեջ խնամով ծրաբված կա 15 հատ այլ մեծ շահնկարների հավաքածոն, որ Հայաստան երկրի մեջ միմյանցից տարբերազաների հայ կանանց շատ աշխատաված հատկանիւններ են, իրենց շշանի տեղական հատուկ տարագներով ու արդ ու զարդի շոկ-չոկ մակարամներովը լկարված:

Այսպիս, ճիշտ երգումով կապվածի խզմտությունով ես հետագա խան տարիների ամառներս անցուցի թափանկերով այն ժամանակվան ուստա կայսրության մաս կազմով Հայաստան երկրի բոլոր բնագավառները, խուզարկու աշոք զննելով բոլոր, ուր որ կար և դեռ կմնար հին օրերից, մինչ մեզ հասած քարի աշխատված մի կտոր:

Սկզբից և ինչ գիտակցելով այս ձեռնարկին արվածագիտականին Հավասարաթեք պատմագիտական և Հանախոսական անգնահատելի հանգամանքին, և որպես վիմենի վկայարանություն, հայ հանձարին Հազար ամերով հին ու բարձր և դեռ ապրող ու բարբառող արժեքին, ապա տիսնելով հընթաց տարիների՝ կոթողացող հանգամանքը իմ ձեռնարկի, ևս նրան պահեցի և պահպանեցի ճիշտ մարմին ի մարմնե, զավակունամող, մեծնող ծնողը հոգածությունով, համարելով այն որպես մի անգին դանձ, նորին մի անգամ էլ ձեռք բերելն անհնար եղող բան:

Քառասուն և վեց տարի, երբ և իմ օրեր ևս անցան «Ընել հուռ և ընդ շուր», երբ իմ այս աշխատասիրությանս արժեքի պանծացումները տեղի ունեցան Փարիզի Սյուզի Տեղ Արդա Տեղորարիքիստան, լուսունի Վիժուալի էնս Ալպեր մուգեռում և Պրիալի Արքիթեքտու- ման կամացական Կաճառի հիսութեատում և Ամերիկայի մեջ՝ Հարվրուտ, Դոլոմիթ, Բրիսելըն, և Շիֆակո-ի համալուրաններում հատկապես կազմված ցու-

ցահանդեսներով, երբ այդ ուսումնական բարձր հաստատովիունների տնօրինություններ խորհելով թե գուցե հայրենադորկ թափառական արտիստ չէի մերծեր ծախել այս գանձը, առաջարկեցին ինձ նազարենք: Ես շփորձվեցի և շեղավ որ փոխեի իմ արածի և իմ սեփականի մասին հասկացողությունս և, ինչպես նրան ձեռնամուխ եղած օրս որոշել էի, և մինչև վերջն ալ մնալով անազայլ և ես ինձ նման, նվիրեցի այն մեր Հայաստանի ազգային պետական քանդարձնեին:

Իմ կտակակատար Հոգաբարձությունը (փրոֆ. 2. Հ. Չագմագյան, դոփտ. Ա. Թարսեղյան, Հայկաղ Ղաղարյան, ուսուցչութիւն) Զատել թահմիզյան, երդվալ փաստարան Սամվել Գալեմյան և Հ. Թուլուպյան) օրինական կարգով իրավասու կարգած եմ ի գեպս իմ անակնկալ մահվան ձեռք առնել բոլոր հարկ եղած միջոցները՝ իմ նվերը ապահով հասցնելու երևան:

Ապրի հայությունը իր հանճարով:

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՆՎԵՐ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՄԻՒ ՏՈՎԼԱՓԻ ԲԺՇԿԱՐԱՆ"-Ի ԶԵՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ԺԵՐԻՄԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆԻՐ» Հաղորդում է. —

Այս ձեռագիրը սեփականությունը եղած է Խարբերդի հանրածանոթ բժիշկ տոքտ. Հարություն Հերիմյանի, որմեն ժառանգություն մնացած է իր զավկին՝ տիկին Աղավնի Տեր-Ղազարյանի և իր ամուսնու ու զավակներուն, որոնք ի հիշտատակ Հարությունի և որդու տոքտ. Խոսրով Հերիմյանի նվիրած են Երևանի Թանգարանին: Այս ձեռագիրը գրի առնված է ասկե վեց դար առաջ: Հեղինակը Ամիր Տոլլամ ոչ միայն ախտաճանաշության, այլ և զեղերու հանձնարարության ախտակետի ցուց կուտահին Հայաստանի մեջ բժշկության բարձր նվաճումները, որոնք ալյուրիան համար ևս նորություններ կը նձեռնեն առողջապահական գիտություններուն:

Այս ձեռագրի առնշությամբ կարծե հիշել սակ նվիրատու պ. Անդրեաս Տեր-Ղազարյանի օգտակար գործունեությունը: Հիշյալն ավելի քան քառասուն տարիներ, իր կյանքը

նվիրած է հայ նոր սերունդի դաստիարակության, տասը տարի Խարբերդի Եփրատ Դոլեճին մեջ, իսկ 20 տարիներ և ի վեր Հալեպի աղզային կրթարաններուն մեջ, որպես անորեն, դաստիարակ և երաժշտության մասնագետ: Վաստակավոր այս ուսուցիչը հեղինակն է շատ մը մանկական երկերու և ժողովրդական երգերու, բոլորն ալ անտիպ: Ուսուցիչ Տեր-Ղազարյանի հայրն է, որ թարգմանած է Սուրբ Գիրքը բյուրատերների:

Պ. Տեր-Ղազարյան ևս հմուտ է քրուական լեզվին և բարբառներուն. ան բանահավաքն է քյուրա ժողովրդական ավելի քան հազար առածներու: Ան կազմած է նաև Խարբերդի և Հարակից գավառներու ընտանեկան գեղագիրներու հատընտիր հավաքածու մը, որը պիտի արամագրե անձամբ նրեանի Բժըշկական էնսիթետի ուսումնասիրության, երբ բախտը հաջողցնե իրեն ալ ներզադիւն դիպի Մայր Հայությունիք:

## ՀԱՅԵՐԸ ՎԻԵՆՆԱՅԻ ԵՎ ԼԻՆԾԻ ՄԵԶ

Բազմաթիվ հունահայեր հավաքած են վիեննայի մեջ: Ասոնք պարտադիր աշխատանքի բերված էին գերմաններուն կողմէն, իսկ ազատագրութենին հետո չէին կրցած ետ դառնալու Անոնց ներկայությունը Ավստրիո մայրաքաղաքին մեջ հայ հասարակական կլանքին նոր զարկ մը տվավ: Հայկական միություն մը ստեղծված է, որուն նոխագահն է Պ. Զոփուրյան:

Վերջերս հավաքությ մը տեղի ունեցած է: Հրամիրված ու ներկա եղած են նաև սովետական հյուպատոսը և փոխ-հյուպատոսը, Վիեննայի ոստիկանապետը, Միտիթարյան

Միարանության կողմէն հայր Ակինյան և Հ. Պողոսյան և Հոգևոր Հովհանն Տ. Եղիշե քահանա:

Տեղայի հայերը, ընդհանրապես գորգի վաճառականներ, գերմանացիներու հետ ամուսնացած են և Հայկական կյանքի ուժացած: Բայց բացառաբար Ավստրիա նշանավոր դերասաններնեն Ռաուլ Անլանը, որ անցյալները իր վախտունամցակը տոնեց, լուհած է իր հայկական զգացումները:

Ամերիկյան գրավման գոտիին կինց քաղաքին մեջ հայ գաղթականներու կայան՝ մը կա, ուր բազմաթիվ ամերիկահայ՝ զինվոր-